

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ
(Կեսդարյա հոբելյանի առթիվ)

ԿԱՌԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Համաշխարհային նավթային արքա Գալուստ Կյուլպենկյանի (1869–1955) կտակի համաձայն, մահից մեկ տարի հետո՝ 1956 թ. սկսեց գործել նրա անունը կրող միջազգային հաստատությունը: Անցել է կես դար: Բնականաբար, հարց է ծագում. ի՞նչ գիտի հայ ընթերցողն այդ անձնավորության և նրա գործի մասին:

Զարմանալիորեն ցավազին կացություն է ստացվել: XX դ. քսան-հիսնական թվականներին Գալուստ Կյուլպենկյան անունը ֆանտաստիկ համբավ ուներ Միջին ու Մերձավոր արևելքներից մինչև Եվրոպա, նույնիսկ մինչև զույգ Ամերիկաներ: Այդ ընթացքում, սակայն, մեզանում այդ նշանավոր անձի նկատմամբ գոյացել էր պարապ: Հայ ընթերցողին մատուցվել էին կցկտուր հոդվածներ, այլևս անգտանելի՝ այլազան տարիների մամուլի էջերում և մի քանի աշխատություններ¹: Դրանցում փորձ է արվել լուսաբանել Գ. Կյուլպենկյանի կյանքի և գործունեության ամբողջական պատկերը, Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության ստեղծման պատմության մանրամասները: Անշուշտ, կատարվածը շնորհակալության արժանի է, բայց ակնհայտորեն դեռևս ապագայի խնդիր է լինելու «Ի՞նչ էր Գ. Կյուլպենկյան երևույթը» հիմնահարցին պատասխանելը: Եվ դա լինելու է գալիք պատմաբան-տնտեսագետ-արվեստագետ շնորհալի գրիչի մատուցումը:

Իր առասպելական հարստությունը Գ. Կյուլպենկյանը կուտակել է նավթարդյունաբերության բնագավառում հանճարեղ կոսահումների և նույնքան հանճարեղ կազմակերպչական գործունեության շնորհիվ, որը, վերջին հաշվով, համառ, սևեռուն աշխատանքի արդյունք էր:

Նա եղել է նավթարդյունաբերական մի շարք ընկերությունների և միավորումների կազմակերպիչ, իսկ ջանքերի փառավոր գագաթը «Իրաքի նավթային ընկերությունն» էր: Այդ բոլոր պարագաներում ինքը՝ իբրև գործարար անհատ, մրցակցել է պետական շահերը ներկայացնող խոշոր խմբավորումների հետ՝ միշտ ունենալով բաժնեթղթերի 5 տոկոսը, որի համար գործարար աշխարհը նրան կոչել էր «Պարոն 5 տոկոս»: Հակիրճ բանաձևումով արտահայտած՝ Գ. Կյուլպենկյանը Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության զարգացման ճանապարհը բացեց: Կատարյալ ռահվիրա էր այդ իմաստով: Միաժամանակ՝ տեսանող: Երբ XIX դ. վերջերին միջազգային նավթարդյունաբերությունը դեռևս սաղմնային վի-

¹ Գալուստ Մարգիս Կյուլպենկյան: Մարդը և իր գործը (այսուհետև՝ Մարդը և իր գործը), Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության Հայկական համայնքներու ծառայության բաժանմունքի հրատարակություն, Լիսաբոն, 1999, Լ. Բ ա լ ա գ յ ա ն. Գալուստ Կյուլպենկյան, Երևան, 2004:

ճակի մեջ էր, ու շատերը՝ նույնիսկ նշանավոր ֆինանսիստներ և ինժեներներ, կասկած ունեին այդ ճյուղի ապագայի նկատմամբ, Գ. Կյուլպենկյանը կարողացավ հեռուն տեսնել և տեսավ ուժի նոր հրաշք աղբյուրը, որը աննախադեպ շոյալություն էր խոստանում: Հանճարեղ հայացք էր պետք թափանցելու համար Պարսից ծոցի հողերի խորքը: Կյուլպենկյանն ունեցավ այդ հայացքը, և նրա առջև բացվեց «սև ոսկու» առասպելական շտեմարանը:

Գ. Կյուլպենկյանը ոչ սովոր թվով առաջամարտիկների շարքում էր, որոնք ստեղծեցին ժամանակակից նավթարդյունաբերությունը: Նավթարդյունաբերության և ֆինանսների բարձրագույն ոլորտներում գործելիս՝ նա վարպետորեն համատեղել է Օսմանյան կայսրության, Անգլիայի և Ֆրանսիայի շահերը՝ դրանք պաշտպանելով ամերիկյան ու գերմանական ներթափանցումներից: Մի հանգամանք, որը նրան հնարավորություն է ընձեռել անընդհատ ունենալ սեփական վերընթաց շարժում: Դեռևս 1898 թ. նա նշանակվել էր Փարիզում և Լոնդոնում Օսմանյան կայսրության դեսպանությունների տնտեսական խորհրդատու: Կյուլպենկյանը «կրցավ երկու երկիրներում շահերը համադրել, – արձանագրել է նրա կենսագիրը, – միշտ նկատի առնելով այն մեծ հեղինակությունը, զոր Բրիտանիա ուներ Օսմանյան կայսրության վրա: Այս իրադրությունը միաժամանակ Կյուլպենկյանին ապահովեց զորավոր դիրք մը: Չնոռնանք, որ Օսմանյան Կայսրության փլուզումեն ետք, իրաքյան քարյուղի հորերը ինկան բրիտանական ազդեցության տակ գտնվող մարզին մեջ»²: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նա Փարիզում ստանձնեց Պարսկաստանի առևտրական ու դիվանագիտական ներկայացուցչի պատասխանատվությունը, որը տևեց 24 տարի: Հենց այդ հանգամանքով էլ 1942 թ. գտնվում էր Վիշիում, որտեղ գործում էր Պետենի կառավարությունը, երբ Ֆրանսիան գրավված էր գերմանացիների կողմից: Հենց այստեղից էլ նա մշտապես բնակության գնաց Լիսաբոն (Պորտուգալիա):

Կարճ ժամանակով, ընդամենը մեկուկես տարի՝ 1930–1932 թթ. Գ. Կյուլպենկյանը եղավ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) նախագահ: Հեռացավ՝ հրաժարական տալով, որովհետև չհանդուրժեց իր մարդկային արժանապատվության նկատմամբ անարդար ցարկոտությունները, որոնցով ժամանակին պարապում էր սփյուռքահայ մամուլը, մասնավորապես Փարիզի «Հառաջ»-ն ու Կահիրեի «Արև»-ը: «Երբ կարելի չըլլար օգնություն տրամադրել կամ շարունակել, – նամակներից մեկում գրում էր Կյուլպենկյանը, – ամենքն ալ դժգոհ կը մնան և կարծես թե կը խորհին, թե ոսկիի աղբյուր մը ունիմ, որ երբեք չի սպառիր, և որմե ամեն ոք կրնա ուզածին պես առնել: Այս մտայնությունը այն աստիճան զգվելի եղած է, որ կը սկսիմ դառնորեն ազդվիլ... Ասիկա ըսել չէ, թե չեմ փափագիր ընել հոգուտ իմ հայրենակիցներուս ինչ-որ բանավոր կը սեպեմ, բայց վհատած եմ իմ մասիս անոնց ցույց տված ապերախտութենեն ու սինիքութենեն»³:

² Մարդը և իր գործը, էջ 10:

³ Է. դ. Մ Է Լ ք ո ն յ ա ն. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, 2005, էջ 242:

Այդ մամուլի ուզածն ակնհայտ էր՝ լայնորեն մտնել Բարեգործականի, մանավանդ Կուլպենկյանի գրպանը, հրնթացս մեղադրելով նրան, թե Բարեգործականի կառավարման համակարգում չի կիրառում ժողովրդավարական սկզբունք: Գ. Կուլպենկյանը ինչ-որ ժամանակ դեռևս հույս ուներ, թե այդ մամուլի թիկունքում կանգնած ուժերը վերջապես կհասկանան Բարեգործականի ստեղծման ու կառավարման հիմնարար սկզբունքը: Ըստ նրա համոզման՝ ՀԲԸՄ մասնավոր հարստություն էր, որի բյուջեն գոյանում էր բացառապես անհատ նվիրատուություններից ու կտակներից: Ուստի, չէր կարող կառավարվել ժողովրդավարական սկզբունքով, քանի որ վաղ թե ուշ Բարեգործականում իշխանության գլուխ կարող էին գալ այդ միջոցների հետ որևէ առնչություն չունեցող անձինք՝ անկանխատեսելի հետևանքներով հանդերձ (իր ստեղծած Հիմնարկությունում Գ. Կուլպենկյանը կիրառեց միայն պաշտոնների նշանակման սկզբունքը):

Այնուամենայնիվ, գործը դեռևս հրաժարականի չէր հասել, երբ նա ստացավ մի ստոր, բայց ուժգին հարված: Այս անգամ Երևանից: Ադասի Խանջյանը, հանցագործության հասնող անպատասխանատվությամբ, լուրջ ամբաստանություններ հասցեագրեց ՀԲԸ Միությանը, մանավանդ նրա նախագահին: Դա արվեց քաղաքական որոշակի նպատակով՝ օգտակար լինելու համար ԽՍՀՄ-ի երեսնական թվականների դաշնակից Թուրքիային, գուզահեռաբար նպատակ հետապնդելով խոչընդոտել սփյուռքահայության միասնության հնարավոր հաստատմանը⁴:

* * *

Գալուստ Կուլպենկյանն անդիմադրելի մղում ուներ դեպի արվեստի գործերը: Նրա նուրբ ճաշակը, պրպտող միտքն ու հայացքը բազում տարիների երկայնքում փնտրել-գտել են արվեստների տարբեր սեռերի ու ժանրերի գլուխգործոցներ՝ հնագույն ժամանակներից մինչև արդիականություն, որոնցով ստեղծել-հարստացրել է իր սեփական պատկերասրահը: Նրա նշանաբանն էր. «Միայն լավագույնը բավական լավ է ինձի համար»⁵: Արվեստի գործերի նրա հավաքածուն ունի շուրջ 6000 կտոր անգուզական նմուշներ: Իբրև օրինակ կարելի է նշել հին դրամների ժողովածուն, հին եգիպտական արձանիկների, կավե ծաղկամանների, ալեքաստրյա ամանների հավաքածուն: Նույն շարքում հիշատակելի է եգիպտական 12-րդ դինաստիայի Ամենահանաթ փարավոնի օբսիդաքար գլուխը: Կան գորգերի, ասեղնագործության, մետաքսեղենի, հանդերձանքի գունագարդ գրքակազմերի նմուշներ և այլն: Այստեղ են հայկական ձեռագրեր, լուսամփոփ, լվացարան (հայկական գործերի մեծ մասը Կուլպենկյանը կտակել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանին): Գեղանկարչական կտավների թվում կան բարձրարվեստ գործեր Վերածննդի դարաշրջանից մինչև XIX դ. խոշորագույն հեղինակների: Նշանավոր է Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժից գնված գործերի հավաքածուն, որի մաս են կազմում Հուդոնի «Դիանա դիցուհին» արձանիկը, երկու Ռեմբ-

⁴ Տե՛ս Գ. Դ ա լ լ ա ք յ ա ն. ՀԲԸ Միության նախագահ Գ. Կուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Երևան, 1996:

⁵ Մարդը և իր գործը, էջ 14:

րանտները, մեկ Վատտո, մեկ Ռուբենս, ինչպես նաև Եկատերինա II կայսրուհուն պատկանող Ֆրանսուա Թոմաս Ժերմենի ֆրանսիական արծաթեղենը:

Գ. Կյուլպենկյանն առասպելական գաղտնապահության տեր մարդ էր: Դրա հետ մեկտեղ ինքն իր շուրջ որոշ խորհրդավորության մթնոլորտ էր ստեղծում, պատմում է կենսագիրը: Եվ հենց այդ ճանապարհով կամովին հրաժարվում էր հրապարակային հարաբերություններից և ինչպես ժանտախտից փախչում էր «մամուլեն ու լուսանկարներեն»⁶:

Իր հավաքածուի համար Լիսաբոնում նա կառուցեց թանգարանի շենք: Մուտքին փակցված է պորտուգալերեն մի արձանագրություն՝ ստորագրված Գ. Կյուլպենկյանի կողմից: Տեքստը հետևյալն է.

Այսու, ամբողջական խղճմտանքով հետևյալ որոշումը կ'առնեմ արվեստի իմ գործերու ապագային վերաբերյալ: Կրնամ հաստատել առանց չափազանցության, թե զանոնք կը նկատեմ իբրև իմ «զավակներս» և անոնց խնամքը մին է իմ մեծագույն նախազբաղումներես: Անոնք կը ներկայացնեն իմ կյանքիս յիսուն կամ վաթսուն տարիներու ամբողջ երկայնքը, որու ընթացքին զանոնք հաւաքած եմ ի գին բազմաթիվ դժվարություններու, սակայն միշտ առաջնորդուած՝ իմ անձնական ճաշակէս: Որոշ է, որ, արվեստի գործերու բոլոր հավաքողներու նման, փնտրած եմ ըլլալ առաջնորդված լավագույն խորհրդատուներէ: Հիրավի, կը զգամ, որ անոնք մաս կը կազմեն հոգիիս ու սրտիս:

Լիսաբոն, 10 փետրվարի, 1953 թ.

Գալուստ Կյուլպենկյան»:

Նույն խորհրդավորությունը նա տարածում էր նաև արվեստի իր հավաքածուի շուրջ: Հետաքրքրվողներին դյուրավ չէր ցուցադրում: Հատկապես խանդոտ էր յուրանկարների նկատմամբ, որոնք նա համարում էր իր ամբողջ կյանքի բարեկամուհիները: Երբ որևէ անձանոթ համառում էր՝ տեսնելու այդ բաժինը, արևելյան հարեմի տիրակալի չորությամբ առարկում էր. «օտարի մը քողագերծե՞մ իմ կանանցիս կիները»⁷:

* * *

1953 թ. հունիսի 18-ին Գ. Կյուլպենկյանը ստորագրեց իր կտակը, որը նշանավորում էր Եվրոպայի մեծագույն բարեսիրական հաստատության ստեղծումը՝ իր անվամբ: Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը Պորտուգալիայի օրենքով ստացավ իրավաբանական անձի կարգավիճակ և սահմանված էր բացառապես ընդհանուր հասարակական օգուտի համար: Նրա գործունեության դաշտը եղավ առողջապահությունը, գիտությունը, կրթությունը և մշակույթը: Հիմնարկությունը պաշտոնապես կոչվում է Calouste Gulbenkian Foundation: Իրավական տեսակետից դա ֆոնդ է, հիմնադրամ, որի կանոնադրական կապիտալը 1955 թ. 65 միլիոն

⁶ Նույն տեղում, էջ 17:

⁷ Նույն տեղում, էջ 18:

դուլար էր: Հիմնադրի արվեստի գործերի հավաքածուից բացի Հիմնարկությանն անցան նավթարդյունաբերության մարզում նրա շահութաբաժինները, որոնք սկզբնական շրջանի 4 միլիոն ստերլինգից հասան 10 միլիոն ստերլինգի: Հետագա տարիներին կապիտալը խիստ ուռճացավ: 1989 թ. գուտ ակտիվը շուրջ 1 միլիարդ 180 միլիոն դուլար էր: Յուրաքանչյուր տարի հիմնադրամի տոկոսները ենթակա են բաշխման: Ընդ որում, բաշխումից հետո մնացած գումարը, որը իրականում լուրջ մեծություն է լինում, հավելվում է ակտիվի վրա: Բաշխումը կատարվում է Հիմնարկության Վարչական Խորհրդի կողմից աշխարհի որևէ կազմակերպության խնդրագրի հիման վրա, առանց դավանական, քաղաքական, դասակարգային, էթնիկական խտրականության: Այնպես որ, թեպետ Հիմնարկությունը «մշտնջենավորապես օժտված է փորթուգալական անհատական օրենքով»⁸, սակայն դրա գործունեությունն ընդգրկում է միջազգային մասշտաբներ:

Գ. Կյուլպենկյանը կտակակատարներ նշանակեց իր անձնական իրավաբան ժողով Ազերեդո դը Պերդիգանին, իր դստեր ամուսին Գևորգ Եսայանին և լորդ Ռեդկլիֆին: Վերջինս շուտով հրաժարվեց, քանի որ Գ. Կյուլպենկյանի որդու հետ համաձայն չէր կտակի որոշ կետերի մեկնաբանության հարցում: Բարերարի որդին՝ Նուբար Կյուլպենկյանը, հոր կամքով տեղ չգտավ Հիմնարկության Վարչական Խորհրդի կազմում, քանի որ հայրը վստահ չէր որդու խելամիտ, տնտեսվար գործելու կարողությանը: Պերդիգանը մշակեց Հիմնարկության կանոնադրությունը: Ըստ այդ փաստաթղթի՝ նոր հաստատությունն ընդմիջտ պորտուգալական է (հոդված 2-րդ) և տեղակայման վայրը Լիսաբոնն է (հոդված 3-րդ): Կանոնադրությունը հնարավորություն է նախատեսում Հիմնարկության մասնաճյուղեր հիմնելու ուրիշ երկրներում: Իրոք, մասնաճյուղեր են հիմնվել Լոնդոնում և Փարիզում: Կանոնադրության 5-րդ կետով նախատեսվում է Հիմնարկության հնարավոր գործունեությունը նաև որևէ երկրում՝ ըստ Վարչական Խորհրդի որոշման: Կանոնադրությունը սահմանում է, որ Վարչական Խորհրդի անդամների մեծամասնությունը պետք է լինի ազգությամբ պորտուգալացի (հոդված 11-րդ): Նախատեսված է նաև, որ ըստ Գ. Կյուլպենկյանի ցանկության, Վարչական Խորհրդի անդամներից մեկը պարտադիր կարգով պետք է լինի Գ. Կյուլպենկյանի ուղիղ գծով արյունակից հետնորդը (հոդված 12-րդ), որի համար սահմանված է նաև պատվավոր նախագահի կարգավիճակ, թեպետ այդ կոչումը գուտ խորհրդանշական է (հոդված 13-րդ): Կյուլպենկյանի կամքի համաձայն, կանոնադրությունն ամրագրում է նրա կողմից նշանակված Վարչական Խորհրդի անդամների ցմահ գործելու իրավասություն: Ցմահ իրավասություն ունի նաև նրա արյունակից հետնորդը (հոդված 18-րդ): Վարչական Խորհրդի մյուս անդամները ռոտացվում են: Հետաքրքրական է, որ միայն ցմահ իրավասությամբ անդամներին է իրավունք վերապահվում ընտրելու Խորհրդի մյուս անդամներին (հոդված 28-րդ)⁹:

⁸ Նույն տեղում, էջ 50:

⁹ Հիմնարկության էլեկտրոնային փոստից նյութը քաղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ Վահրամ Ղարախանյանը:

Պերդիգանի մշակած կանոնադրության կարևոր հատկանիշն էր, որ Հիմնարկությունը իրավական տեսակետից պետությունից անկախ կարգավիճակ ուներ:

Գ. Կյուլպենկյանը կտակում նախատեսել էր մասնակի որոշ հատկացումներ հայկական կազմակերպություններին: Օրինակ՝ Երուսաղեմի Մատենադարանին, Պոլսի Սուրբ Փրկիչ հիվանդանոցին, Սբ. Էջմիածնի Մայր տաճարի նորոգությանը և այլն: Ընդհանուր առմամբ, սակայն, կտակը շարադրված էր «աշխարհաքաղաքացիության» սկզբունքով՝ վեկտորը շեշտված դեպի Պորտուգալիա: «Հայկականությունը» բացակայում էր: Միայն ժոզե Ազերեդո դը Պերդիգանի և Գևորգ Եսայանի ջանքերով Հիմնարկության կազմում ստեղծվեց հայկական բաժին, որի պաշտոնական անվանումն է «Հայկական համայնքների ծառայության բաժանմունք»: Հայկական բաժնի ստեղծման առիթով Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հետևյալն է հաղորդել տողերիս հեղինակին տարիներ առաջ: Մայր տաճարի նորոգության համար Գ. Կյուլպենկյանի խոստացած 400 հազար դոլարը ստանալու համար արտասահման մեկնած կաթողիկոսը հանդիպել է Պերդիգանին, որը և բացահայտել է Հայկական բաժնի ստեղծման «գաղտնիքը»: Ըստ այդմ, Գ. Կյուլպենկյանը մահվան մահճում շնջացել է Պերդիգանին՝ Հիմնարկության կազմում Հայկական բաժին ունենալու մասին իր կամքը: Պերդիգանն էլ Գ. Եսայանի հետ անհապաղ կատարել է բարերարի վերջին կամքը:

* * *

Գ. Կյուլպենկյան Հիմնարկությունը գրադեցնում է 25.000 քառակուսի մետր տարածք: Կենտրոնավայրից բացի, այդ տարածքի վրա գտնվում են «Գալուստ Կյուլպենկյան թանգարանը» (բացվել է 1969 թ.), Արդիական արվեստի կենտրոնը, որը կրում է ժոզե Ազերեդո դը Պերդիգանի անունը (բացվել է 1983-ին), մշակույթի կենտրոնը, որն ունի գերժամանակակից հարմարություններով խոշոր սրահ՝ մշակութային զանազան ձեռնարկումների և հանդեսների համար, ժողովասրահներ, գրադարաններ (դրանցից մեկը նախատեսված է գեղարվեստական դաստիարակության համար, և մուտքն ազատ է հանրության առջև): Համալիրի շուրջը գրեթե 7 հեկտարանոց պարտեզներ են: Ճիշտ կենտրոնում բացօթյա ամֆիթատրոն է՝ ամառային հանդեսների և ջազի համար: Պարտեզների մուտքի մոտ մի փոքրիկ շինություն է՝ թաղված թավուտի մեջ. դա էլ գեղարվեստական դաստիարակության կենտրոնն է:

Հիմնարկությունն ունի երգչախումբ, պարախումբ (բալետի) և սիմֆոնիկ նվագախումբ: 1980-ական թվականներին Հիմնարկության խնդրանքով ՀԽՍՀ սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն Լիսաբոն գործուղեց մի քանի պրոֆեսիոնալ ջութակահարների՝ նվագախմբի կազմում երկարաժամկետ աշխատելու համար: Լիսաբոնից ոչ շատ հեռու, Օրիաս քաղաքում գործում է բարձր մակարդակի գիտական մի հաստատություն, որը Հիմնարկությունը կոչում է «Կյուլպենկյան կաճառ»: Նույն թվականների կեսերին վերոգրյալ կոմիտեի նախագահի հանգամանքով Պորտուգալիայում գտնվելիս՝ տողերիս հեղինակի ուշադրությունը գրավեց տոպինամբուրի հետազոտությունների նպատակասլաց և

հետևողական իրականացումը պորտուգալացի գիտնականների կողմից այդ գիտական հաստատության մեջ: Մեր հասկացողությամբ դա գետնախնձոր է (չփոթել կարտոֆիլի հետ, որը սփյուռքահայերը իբրև կանոն գետնախնձոր են կոչում թարգմանաբար ֆրանսերենից): Մեզանում արհամարհված այդ բույսը, որ բացարձակապես խնամք չի պահանջում, ըստ պորտուգալացի գիտնականների, խիստ օգտակար է մարդու առողջության համար, ինչպես նաև հյութեղ անասնակեր է:

Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը Լոնդոնում ունի ներկայացուցչություն, որը կոչված է համադրելու Անգլիայի և Բուլանդիայի մեջ գտնվող դրամական նպաստները: Ներկայացուցչության գործունեության շրջանագիծը բավականին լայն է: Հենց նա է հայթայթում կրթաթոշակներ Մեծ Բրիտանիայում իրենց դոկտորական թեզի վրա աշխատող պորտուգալացի ուսանողների համար: Ավելին, ինչպես արձանագրված է Հիմնարկության հրատարակած գրքույկում, Լոնդոնի «Ներկայացուցչությունը կը վարե նաև դրամանպաստի հայտագիրներ կրթության, արվեստի, ընկերային օգնության և փորթուգալ-բրիտանական մշակութային մարզերում մեջ»¹⁰: Ինչ վերաբերում է Փարիզին, ապա այստեղ՝ Գ. Կյուլպենկյանի նախկին հոյակերտ ապարանքում՝ Իենա փողոցի վրա, 1968 թ. ի վեր գործում է «Գալուստ Կյուլպենկյան մշակութային կենտրոնը»: Համերգներ, նվագահանդեսներ, ցուցահանդեսներ, զանազան դասընթացներ, գիտաժողովներ, այսպիսին է կենտրոնի ոչ լրիվ հայտագիրը: Հենց այս կենտրոնն է ապահովում տպագրական աշխատանքը, որի անհրաժեշտությունը մշտապես առկա է պորտուգալա-ֆրանսիական մշակութային հարաբերությունների ծիրից ներս: Հիմնարկությունը կառուցել և Փարիզի համալսարանական ավանին է նվիրել հանրակացարանի մի շենք՝ պորթուգալացի և ուրիշ ազգությունների պատկանող ուսանողների համար: Ճիշտ այնպիսի մի կենտրոն է դա, ինչպիսին կառուցվել էր Պոդոս Նուբարի կողմից հայ և օտարազգի ուսանողների համար:

Հիմնարկությունը լայն գործունեություն է ծավալել աշխարհի ուրիշ վայրերում ևս. Միջին և Մերձավոր Արևելքից մինչև Միացյալ Թագավորության զանազան կետերը, հայ սփյուռքից մինչև պորտուգալախոս երկրները՝ տարբեր մայրցամաքներում: Ավելի քան 70 երկրներ Հիմնարկության նպաստարնկալների ցանկում են:

* * *

Գալուստ Կյուլպենկյանի անունը պաշտամունքի առարկա է դարձել Պորտուգալիայում: Բավական է գավառային որևէ բնակավայրում մոտենալ փոքրիկ շուկաների մոտ խմբված մարդկանց ու հարցնել՝ ճանաչո՞ւմ են արդյոք Գալուստ Կյուլպենկյանին: Գրեթե ամենուրեք պատասխանը նույնն է. մարդիկ գոհունակությամբ ժպտում են, նայում դեպի երկինք և քաղցր ծոր տալիս. «Օ, Գալուշտ»: Իրոք, Գ. Կյուլպենկյանը նախախնամության նվերն էր այդ երկրին ու ժողովրդին: Ահա, թե ինչպես է մեկնաբանվում երևույթը վերոհիշյալ գրքույկում. «Այսօր, Հիմնարկության ծնունդն... տարիներ ետք, կարելի է հաստատել այն վճռական դերը,

¹⁰ Մարդը և իր գործը, էջ 55:

զոր ան խաղաց Փորթուկալի ճակատագրին համար, հատկապես մշակույթի ու հանրային առողջապահության մարզերուն մեջ: Առանց չափազանցության կարելի է խոսիլ փորթուկալական մշակույթի նախարարության մը մասին, որուն արժանիքն եղավ պատրաստել և կազմավորել հառաջապահ արվեստագետներ՝ անոնց հատկացված կրթաթոշակներուն շնորհիվ»¹¹:

Փաստերն էլ ապացուցում են այդ «վճռական դերը»: Հիմնարկությունը պարբերաբար տեղեկատու մատյաններ է հրատարակում, որոնցում ամփոփված են որոշակի ժամանակահատվածի ընթացքում կատարված նպաստները՝ թե՛ իբրև բարեգործական և թե՛ իբրև նպատակային հատկացումներ: Հիմնարկության սկզբնավորումից հետո անցած վեց տարիների ընթացքում, ստույգ 1956–1962 թթ. Պորտուգալիային վերաբերող նպաստների ցուցակը հրատարակված է 76 էջի վրա, ընդ որում իրականացվել են նպաստներ՝ բարեգործության, երաժշտության, թատրոնի, հնագիտության, կրթության և գիտության բնավազաններում:

Նպաստներ	առ 01.12.1959 թ.	1960–1962 թթ.
բարեգործական	36.862	31.527
երաժշտության	7.962	23.514
թատրոնի և հնագիտության	12.276	11.069
կրթության	61.069	112.588
գիտության	53.076	55.686
ընդամենը	171.245	234.384

Այս ամենը¹² հաշվարկված է կոնտոյով՝ պորտուգալական արժույթով: Իսկ 1 կոնտոն տվյալ ժամանակահատվածում համարժեք էր 35 ամերիկյան դոլարի¹³:

Նպաստների մանրամասն ցուցակը խիստ խայտաբղետ պատկեր է ներկայացնում: Դրանում Լիսաբոնից բացի տեղ են գտել շատ ուրիշ բնակավայրեր, կենտրոններ և այլն: Նպաստատուների ցանկում են հիվանդանոցներ ու ծերանոցներ, մինչև իսկ հրշեջների կամավոր ընկերություններ: Միջոցներ են տրամադրվել բժշկական սարքավորումների, նույնիսկ վերելակների նորոգման ու հեռուստացույցի տեղադրման նպատակների համար:

Երաժշտության բնագավառում լուրջ միջոցներ են տրամադրվել Կյուլպենկյան երաժշտական ֆեստիվալների (տարեկան մեկ անգամ) կազմակերպման, Կյուլպենկյան կամերային նվագախմբի, կոնսերվատորիաների և երաժշտական ակադեմիաների, ժողովրդական երաժշտության հետազոտությունների կարիքներին: 1962 թ. 37 կոնտո է հատկացվել «Գալուստ Կյուլպենկյան» ամենամյա մրցանակների համար: Նույն տարում Պորտուգալիայի բալետի կենտրոնի պրոֆեսիոնալ պարողների դասընթացների համար տրամադրվել է 1390 կոնտո, ինչպես նաև 100

¹¹ Նույն տեղում, էջ 56–57:

¹² Calouste Gulbenkian Foundation, Grants, 1956–1962, p. 7.

¹³ Նույն տեղում, էջ 5:

կոնտո ռեպերտուարի զարգացման համար: Խոշոր գումար է հատկացվել օպերայի էքսպերիմենտալ կամերային խմբին:

«Պորտուգալիայի արվեստի պատմության», «Իբերիա թերակղզում մուսուլմանական ճարտարապետությունը և նրա ազդեցությունը քրիստոնեականի վրա» դասընթացների կազմակերպման, ինչպես նաև «Ներածություն արվեստների պատմության» դասախոսությունների համար հատկացվել է 295 կոնտո: Յոթ տարում կազմակերպվել են 9 ցուցահանդես, այդ թվում «Կոլպենկյան արվեստի ցուցահանդեսը», «Ղեբյուսիի հարյուրամյակը», «Ժամանակակից պորտուգալական արվեստը» (սա եղել է շրջիկ, ցուցադրվել է նաև Ազորյան կղզիներում ու Մադեյրայում), գեղանկարներ Կոլպենկյան հավաքածուից և այլն: Հիմնարկությունը դրանց համար տրամադրել է ավելի քան 8500 կոնտո: Իրականացվել են արվեստին վերաբերող գիտական 9 հրատարակություններ, երեխաների նկարների ցուցահանդեսներ են կազմակերպվել Լիսաբոնում և Ֆունբալում:

Բավական հետաքրքրական պատկեր է ներկայացնում կրթության բաժինը: Նախապես պետք է ասել, որ հանրային կրթություն տարածելու նպատակով Հիմնարկությունը կիրառում է Բիբլիոթեկաների պրակտիկան, այսինքն՝ հատուկ ավտոբուսներ շրջիկ գրադարանների դեր են կատարում երկրում: Ահա այդ շրջիկ և մշտական գրադարանների վրա մինչև 1959 թ. Հիմնարկությունը ծախսել է 11180 կոնտո, իսկ 1960–1962 թթ.՝ 42015 կոնտո¹⁴: Ամերիկյան դոլարի վերածելու դեպքում, կարելի է պատկերացնել, թե Հիմնարկության կողմից ինչ միջոցներ են տրամադրվում Պորտուգալիայի գրադարաններին:

Սկզբնական, միջնակարգ դպրոցների, ինչպես նաև տեխնիկական ուսումնարանների աշակերտների համար նախատեսված են կրթաթոշակներ: Միայն 1962 թ. դրանց ընդհանուր գումարը կազմել էր 6365 կոնտո: Գիտությունների և գրականության ուսանողներին 1957-ից 1962 թ. վճարվել է շուրջ 40 հազար կոնտո կրթաթոշակ: Նույն ընթացքում արվեստագետ ուսանողներին տրվել է ավելի քան 1200 կոնտո կրթաթոշակ: Վերջապես, երաժշտության բնագավառի ուսանողությանը հատկացվել է (նույն ժամանակահատվածում) շուրջ 5600 կոնտո կրթաթոշակ: Հրատարակվել են բազմաթիվ պարբերականներ և դասագրքեր: Հատկացումները շատ են: 76 էջանոց ընդհանուր ցուցակից 14 էջը պարունակում է կրթությանը վերաբերող նպաստների ցուցակը, որն իրականացվել է միայն 1956–1962 թվականներին: Իսկ 10 էջի վրա էլ շարադրված է գիտությանն առնչվող հատկացումների ցուցակը, որը մեծ մասամբ վերաբերում է առողջապահությանը: Հատկացումներ են կատարվել նաև տնտեսագիտական, գյուղատնտեսական, աստղագիտական, միջուկային ֆիզիկայի և այլ բնագավառների գիտական աշխատանքների համար:

Այդ բոլոր ցանկերը կարող են մոտավոր պատկերացում տալ նաև 1962-ից հետո ընկած ժամանակաշրջանում Հիմնարկության գործունեության վերաբերյալ, եթե նկատի ունենանք, որ ծախսվող միջոցներն անընդհատ աճել են, իսկ գործունեության շրջանագիծը՝ ընդլայնվել է:

¹⁴ Նույն տեղում, էջ 51:

Նման պատկեր ունեն նաև Միացյալ Թագավորության և Բրիտանական Համագործակցության երկրներում նպաստառուներին կատարված հատկացումները¹⁵ (հաշվարկն արված է ֆունտ ստերլինգով):

Նպաստներ	առ 01.12.1959 թ.	1960–1962 թթ.
բարեգործական	129.900	166.864
արվեստներ	375264	534627
կրթություն	179694	155599
գիտություն	7900	6851
ընդամենը	692758	86394
համարժեքը՝ կոնտոյով ¹⁶	55623	69115

1956–1962 թթ. նպաստների մանրամասն ցուցակն այս պարագայում 26 էջ է: Այստեղ էլ հանդիպում են բազմաթիվ մարդասիրական, բայց և անսպասելի հատկացումներ: Օրինակ՝ 2000 ստերլինգ է հատկացվել չամուսնացած կամ լքված մայրերի տան համար: Կամ՝ որոշ հատկացում է արվել մի ծառայության, որը խորհուրդներ է տալիս դպրոցից հեռացած աղջիկներին՝ աշխատանք գտնելու հարցում: Մի ուրիշ օրինակ. 2000 ստերլինգ է հատկացվել Մալթայի ասպետական օրդենի իռլանդական ընկերակցությանը՝ Դուբլինի շտաբի համար անհրաժեշտ համալիր ձեռք բերելու նպատակով:

Միջոցներ են տրամադրվել Բոհաններբուրգի (Հարավային Աֆրիկա) երաժշտական ու դրամատիկական միավորմանը, Նոր Զելանդիայի պատկերասրահների և թանգարանների ընկերակցությանը, բրիտանական մանկական թատրոնի միավորմանը, Բրիտանական թանգարանին, Հռոմում քանդակագործներին տրվող Կյուլպենկյան թոշակին, գավառում համերգների համար, քննադատական քառամյա հանդեսին, երիտասարդ նկարիչների գործերը գնող հիմնադրամին, Լոնդոնի օպերայի կենտրոնին, գավառական թանգարաններին և պատկերասրահներին, մրցանակներ համագործակցության երաժիշտ-ուսանողների համար, Շեքսպիրի արքայական թատրոնին (22.000 ստերլինգ – 1960–1962 թթ.):

Բավական հետաքրքիր է կրթության բաժինը: Բնականաբար, հատկացումները հիմնականում կատարվել են կրթական ցանցին, դասագրքերի ու ծրագրերի տպագրության, ուսուցիչների պատրաստման, աշակերտների և ուսանողական կրթաթոշակների համար և այլն: Կան, սակայն, բացարձակապես անսպասելի, թեպետ, իրոք, մարդասիրական դրսևորումներ: 1960–1962 թթ. համար, օրինակ, 2300 ստերլինգ հատկացումներ են արվել աշխարհի (իմա՝ Բրիտանական Համագործակցության) գյուղացի կանանց միավորմանը՝ հետևյալ նպատակներով. կատարել ճամփորդական ծախսերը՝ ա) երկու ուսյալ աֆրիկացի կնոջ՝ Միացյալ Թագավորությունում տնային տնտեսություն և սոցիալական ապահովություն սովորելու համար, բ) Բրիտանական Համագործակցության նվազ զարգացած տա-

¹⁵ Նույն տեղում, էջ 90:

¹⁶ Կոնտոյի համարժեքը՝ 12,10 ստերլինգ:

րածքներից երկու ուսյալ կնոջ՝ Միացյալ Թագավորությունում տնային տնտեսություն և սոցիալական ապահովություն սովորելու համար:

Գիտական բաժինը հիշյալ տարիներին համեմատաբար աղքատ է եղել: Հիշատակության արժանի է Աֆրիկայի՝ Մարդու հետազոտման ինստիտուտին տրված հատկացումը պրոֆեսոր Ա. Ալմելդայի՝ հարավանգղական բնիկներին վերաբերող դասախոսությունների անգլերեն հրատարակության համար:

* * *

Հիմնարկության հատուկ ուշադրության առարկան է եղել Մերձավոր և Միջին Արևելքը, քանի որ ստեղծման օրվանից դրա միջոցներն ուռճացել են գլխավորապես այդ տարածքի նավթաբեր հողերի հաշվին: Գործունեության առաջին տարիները համընկան Իրաքում Կասեմի գլխավորած հեղափոխության (1958 թ.) սոցիալ-տնտեսական բարեփոխությունների ժամանակաշրջանին: Մինչև 70-ական թվականները ծայր առած ազգայնացման քաղաքականությունը, երբ ազգայնացվեց նաև Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության միջոցների հիմնական աղբյուրը՝ «Իրաքի նավթային ընկերությունը» և նույնիսկ դրանից հետո էլ Հիմնարկության ուշադրությունը կենտրոնացած էր Իրաքի վրա: Բավական միջոցներ են հատկացվել նաև տարածաշրջանի մյուս երկրների՝ Իրանի, Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի նպաստառուներին:

Տարածաշրջանի համար աղյուսակն ունի հետևյալ տեսքը¹⁷ (հաշվարկը կատարված է դոլարով)

Նպաստներ	առ 01.12.1959 թ.	1960–1962 թթ.
բարեգործական	179.200	321.076
արվեստներ	168.000	124.024
կրթություն	5.553.800	2.289.692
գիտություն	72.800	6870
ընդամենը	3.973.800	2.841.662
համարժեքը՝ կոնտոյով	313.594	81.190

Աղյուսակի թվերն ավելի խոսուն կլինեն, եթե ասենք, որ Բաղդադում կառուցվեցին հին արվեստի թանգարան և մարզադաշտ, Բեյրութում՝ Ամերիկյան համալսարանի շենք, Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի հիվանդանոցները հարստացան բժշկական սարքավորումներով և այլն: Միայն Բաղդադի մարզադաշտի ու մարզակենտրոնի կառուցման համար մինչև 01.12.1959 թ. հատկացվել է 2.942.800 ԱՄՆ դոլարի գումար, նաև 585.200 ԱՄՆ դոլար է տրամադրվել 1960–1962 թվականներին:

Հատկանշական է, որ Հիմնարկությունն ուշադրությունը կենտրոնացնում էր տեղական կադրերի պատրաստման և ազգային արվեստների զարգացման վրա: Գլխավորապես միայն Իրաքում և Լիբանանում ուսման համար մինչև 1962 թ.

¹⁷ Calouste Gulbenkian Foundation, Grants, 1956–1962, p. 117.

տրամադրվել են 54.5 հազար դոլարի կրթաթոշակներ: Բաղդադում պլաստիկ արվեստների կենտրոնի կառուցման համար հատկացվել է 42.000 դոլար, 1960–1962 թթ. գեղանկարչության և քանդակագործության մրցանակների համար՝ 7700 դոլար: Բաղդադում քաղցկեղի ախտորոշման և հետազոտման կենտրոնի կառուցման համար տրվել է 210.000 ԱՄՆ դոլար:

Հիմնարկության միջազգային դեպարտամենտը նույնպես լայն աշխատանք է ծավալել: Բավական է արձանագրել, որ նույն ժամանակաշրջանում կատարվել է ավելի քան 110.000 կոնտոյի նպաստ Իսպանիայի, Ֆրանսիայի, Չիլիի, Թուրքիայի, Իրանի, Ուրուգվայի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի, Բրազիլիայի, Բելգիայի, Ճապոնիայի նպաստառուներին: Այդ թվում բավականին միջոցներ են տրամադրվել տարբեր երկրներում ջրհեղեղների, երկրաշարժերի պատճառած վնասների և հոգեկան ցնցումների վերացման, հակաքաղցկեղային պայքարի կազմակերպման նպատակների համար:

* * *

Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության Հայկական բաժինը գործում է հենց հաստատության հիմնադրման օրից: Հիմնարկության Վարչական Խորհրդի կազմում, կանոնադրության համաձայն, ինչպես նշվեց, մշտապես գործում է Գալուստ Կյուլպենկյանի մերձավոր ազգականներից մեկը, որը և Հայկական բաժնի վերին պատասխանատուն է Վարչական Խորհրդի առջև: Առաջինն այդ դիրքի մեջ եղել է Գալուստ Կյուլպենկյանի դստեր՝ Ռիտայի ամուսինը՝ Գևորգ Եսայանը: Այնուհետև Գալուստի եղբոր՝ Վահանի որդին՝ Ռոբերտո Կյուլպենկյանն է երկար տարիներ վարել այդ պաշտոնը: Հետո Գևորգ Եսայանի որդին՝ Միքայել Եսայանն է եղել Վարչական Խորհրդի անդամը: Վերջինիս փոխարինել է նրա որդին՝ Մարտին-Մարգիս Եսայանը: Հայկական բաժնի աշխատանքներն իբրև տնօրեններ անմիջականորեն ղեկավարել են մի քանի սփյուռքահայ նշանավոր գործիչներ. տաղանդավոր արձակագիր Վահրամ Մավյանը, որը մեծ հեղինակություն ուներ թե՛ Սփյուռքի, թե՛ Հայաստանի մտավորական շրջանակներում, Գ. Կյուլպենկյանի աշխատակից Կորյուն Քեշիշյանը: Ներկայումս Հայկական բաժնի տնօրենն է Երևանի համալսարանի շրջանավարտ, դոկտոր Զավեն Եկավյանը, որի արդյունավետ գործունեությունն արժանանում է Հայաստանի կրթական, գիտական, առողջապահական, մշակութային մարմինների և օջախների, կազմակերպությունների, աշխարհական թե՛ հոգևոր գործիչների, մտավորականների բարձր գնահատանքին: Զ. Եկավյանին օգնում է Աստղիկ Չամկերտանը՝ Պողոս Նուբարի թոռնուհին:

Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության առաջին չորս տարիների ցուցանիշով (առ 31.12.1959 թ.) Հայկական բաժնին հատկացված նպաստների ծավալը զիջում է միայն Պորտուգալիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի համար հատկացված նպաստների ցուցանիշին: Իսկ հաջորդ երկու տարիներին ռեալ կատարված փաստական վճարումների ցուցանիշով Հայկական բաժինը զիջել է միայն Պորտուգալիային հատկացված փաստական վճարումներին:

Իրական պատկերը հետևյալն է (հաշվարկված է ԱՄՆ դոլարով)¹⁸

Նպաստներ	առ 31.12.1959 թ.	1960–1962 թթ.	1960–1962 թթ. փաստական վճարումներ
բարեգործական	794419	246260	339450
կրթություն	1.185.717	2.255.880	1.593.812
գիտություն	28000	3360	28360
ընդամենը	2.008.136	2.505.500	1.961.622
համարժեքը՝ կոնտոյով	57526	71585	47704

Հայկական բաժնի կատարած նպաստների մանրամասն ցուցակը 1956–1962 թթ. տեղեկատուի մեջ զբաղեցնում է ճիշտ 10 էջ: Այս ցուցանիշով Հայկական բաժինը զիջում է Պորտուգալիային, Միացյալ Թագավորությանը և Բրիտանական Համագործակցությանը հատկացված նպաստառուների ցուցակին: Աղյուսակը վկայում է նաև, որ 1960-ական թվականների սկզբներին տարեկան 6–7 հարյուր հազար դոլարի նպաստ է տրվել հայկական կազմակերպություններին: Միննույն ժամանակ հստակ դրսևորվում է այն փաստը, որ Հիմնարկությունը դեռևս գործակցություն չէր սկսել Հայաստանի հետ: Մասնավանդ, գիտության բնագավառին վերաբերող ցածր թվերն այդ մասին են վկայում: Այնուամենայնիվ, հայկականության ուղղությամբ արդեն իսկ լուրջ աշխատանք էր ծավալվել, որի ընդհանուր բաղադրության մեջ երկու հանգամանք բնութագրական են: Առաջին. շարունակվում էր Իրաքի նկատմամբ հատուկ մոտեցումը, բնականաբար, այս պարագայում իրաքահայությանը հասցեագրված: Օրինակ՝ Բաղդադի հայկական եկեղեցու շինարարության համար լրացուցիչ հատկացվել է 33.600 դոլար, Մոսուլի հայկական համայնքին տրամադրվել է 18.000 դոլար՝ դպրոցի կահավորանքի և այլ կարիքների համար: Տարբեր ծավալների նպաստներ են հատկացվել Բաղդադի, Մոսուլի հայ տիկնանց աղքատախնամ ընկերություններին, Հայ երիտասարդաց ընկերակցությանը, Բաղդադի հայ եկեղեցու թեմին, բժշկական օժանդակություն է տրվել կարիքավոր հայերին, Բաղդադի Սրբոց թարգմանչաց վարժարանին, Քիրքուքի եկեղեցուն ու դպրոցին, Բասրայի մանկապարտեզին և այլն:

Երկրորդ բնութագրականը Ստամբուլի հայությանը տրվող նպաստներն են: Դա մշտական ավանդույթ է եղել և շարունակում է մնալ մեր ժամանակներում ևս, քանի որ հենց Ստամբուլն էր Գ. Կոլպենկյանի ծննդավայրը, և հենց այնտեղ էլ՝ Սուրբ Փրկիչ հիվանդանոցի կենտրոնական տարածքում, գտնվում էր նրա գերդաստանի դամբարանը: 1956–1962 թթ. նպաստներն ուղղվել են Սուրբ Խաչ եկեղեցու նորոգությանը, Սուրբ Փրկիչ հիվանդանոցին ռենտգենյան ապարատի նվիրատվությանը, վիրաբուժական և լաբորատոր սարքավորումների ձեռքբերմանը, Հայ Պատրիարքարանին՝ Պոլսի Սուրբ Խաչ եկեղեցու լիցեյի ուսանողներին իբրև

¹⁸ Նույն տեղում, էջ 77:

օգնություն, Ստամբուլի Պողոս-Վառվառյան, Սահակյան-Նունյան-Վարդունյան դպրոցներին ու Սուրբ Խաչ լիցեյին և այլն:

Պետք է արձանագրել, որ հենց սկզբնավորության ժամանակներում Հայկական բաժինը խտրականություն չի դրել դավանական տարբերությունների վրա: Նպաստներ են տրվել թե՛ Հայ Առաքելական և թե՛ Հայ կաթոլիկ եկեղեցիների գանազան միավորումներին, այդ թվում՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին, Անթիլիասի Կաթողիկոսությանը, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններին (յուրաքանչյուրին տողաշար մեքենա):

Հետաքրքրական է իմանալ, որ Հիմնարկությունը միջոցներ է տրամադրել «Կուլյաենկյան հիմնադրամի միկրոֆիլմերի գրադարան» ստեղծելու նպատակով և նույնիսկ 2240 դոլար է հատկացրել Գյոտեբորգում Նորայր Բյուզանդացու ձեռագրերը միկրոֆիլմի վրա գրանցելու համար: Կարևոր է նաև, որ գործակցել է գաղթականների հարցով ՄԱԿ-ի Բարձր Կոմիսիոնների հետ (իբրև համատեղ ծրագիր)՝ իրականացնելու համար հետևյալը. Հունաստանում բնակարան հատկացնել 60 ծեր փախստականների, ծրագրավորել Լիբանանի հայ փախստականներին կացարաններ տրամադրելու գործը, Ֆրանսիայի Սեն-Ռաֆայելում տարեց հայերին ապահովել ճաշարանով, նույն քաղաքում 40 տարեց հայերի համար ստեղծել ծերանոց, Սալոնիկում կարիքավոր հայերի համար տուն կառուցել, Հալեպում վերակառուցել և վերանորոգել հայոց ծերանոցը, Հունաստանում կառուցել 85 հայ տարագիր ընտանիքների համար տուն:

Խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանին վերաբերող (Սուրբ Էջմիածնին կատարած հատկացումներից բացի) մեկ կետ է եղել. որոշ միջոցներ են տրամադրվել Ազգային գրադարանի համար գրականություն ձեռք բերելու նպատակով: Հայաստանի հետ սերտ գործակցությունը սկսվեց ավելի ուշ:

1960-ական թվականների երկրորդ կեսին Երևան այցելեցին Ժոզե Ազերեդո դը Պերդիգանը և Ռոբերտո Կուլյաենկյանն իրենց տիկնանց հետ: Նրանք Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հյուրերն էին՝ վերջինիս գահակալության 10-րդ տարեդարձի առիթով: Կառավարության հանձնարարությամբ Հայկական ԽՍՀ - Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհուրդը (որի նախագահը լինելու պատիվը վիճակված էր տողերիս հեղինակին) շքեղ ընդունելություն կազմակերպեց կաթողիկոսի պատվին: Բնականաբար, ներկա էին և նրա հյուրերը: Հենց այդ ընդունելության ժամանակ Պերդիգանը իր և Կուլյաենկյանի անունից հայտնեց, որ Հիմնարկությունը որոշել է նպաստներ հատկացնել Հայաստանի կազմակերպություններին: Անմիջապես հրապարակվեցին տարբեր հասցեատերեր, և հայտարարվեց ավելի քան 200.000 դոլարի նպաստի հատկացման որոշումը¹⁹:

Հետագա տասնամյակներում թե՛ Սփյուռքին, թե՛ Հայաստանին տրամադրվող նպաստների ծավալը բազմակի ավելացավ: Լիսաբոնից հասած բանավոր տեղեկատվության հիման վրա, անցյալ 50 տարիների ընթացքում Հայկական բաժինը

¹⁹ Կ. Դ ա լ լ ա ք յ ա ն. Հուշապատում, Երևան, 1998, էջ 90:

հատկացրել է շուրջ 120 միլիոն դոլարի նպաստ: Սա, անշուշտ, իրականությանը շատ մոտ թիվ է:

Ինչպե՞ս է ընթացել ուռճացումը: «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի մեջ Վ. Ղարախանյանը հրատարակել է նյութեր, որոնք վերաբերում են Հայկական բաժնի գործունեությանը 1964–1970 և 1995–1998 թվականներին:

Նպաստներն ըստ տարիների (1964–1970) հետևյալ տեսքն ունեն²⁰ (հաշվարկները կատարված են ամերիկյան դոլարով)

01.01.1964	01.01.1965	01.01.1966	01.01.1967	01.01.1968	01.01.1969	01.01.1970
31.12.1964	31.12.1965	31.12.1966	31.12.1967	31.12.1968	31.12.1969	31.12.1970
1.476.000	1.394.865	1.548.330	1.399.400	1.427.044	1.517.360	1.500000

Աղյուսակի տվյալները վկայում են, որ արդեն 1960-ական թվականների երկրորդ կեսերին Հայկական բաժնի հատկացրած նպաստները ավելի քան կրկնապատկվել են՝ տարեկան կազմելով միջին հաշվով 1.5 միլիոն դոլար:

Ուռճացումը տեղի է ունեցել, առաջին հերթին, ի հաշիվ Հայաստանում նպաստառուների թվաքանակի կտրուկ աճի: Խնդրո առարկա ժամանակահատվածում 50 հազար դոլար է տրամադրվել հայագիտական հրատարակություններ իրականացնելու համար Էջմիածնի կաթողիկոսարանի միջոցով, 25 հազար դոլար՝ Մաշտոցի Մատենադարանին՝ արտասահմանից մասնագիտական հրատարակություններ հայթայթելու համար, նույնպիսի նպատակով՝ 15 հազար դոլար Գիտությունների ակադեմիային, 20 հազար դոլար Հուշարձանների պահպանման ընկերությանը մի հուշարձան վերանորոգելու համար և այլն: Երևանի սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտին ու Պետական համալսարանին տրամադրվել է 80 հազար դոլար՝ սարքավորումներ հայթայթելու համար: Նույն համալսարանին հատկացվել է ևս 10 հազար դոլար՝ արտասահմանյան գրականության ձեռքբերման համար: Հայաստանի գիտական հաստատություններին ընդհանուր հաշվով 150 հազար դոլարի նպաստ է տրվել գիտական, կրթական և մշակութային ձեռնարկումների համար: «Կոմիտասի տուն» համերգասրահի շինության և կահավորման համար 1969 թ. հատկացվել է 250 հազար դոլար, Ամբերդի վերականգնմանը՝ 20 հազար դոլար, Հայաստանի ԳԱ-ին 10 հազար դոլար՝ մասնագիտական գրականության համար, դարձյալ Պետհամալսարանին՝ 150 հազար, գումարած 60 հազար դոլար գիտական սարքավորումների համար, Օտար լեզուների ինստիտուտին 10.000+5430 դոլար լինգվաֆոնային կաբինետների համար, Մատենադարանին՝ 10 հազար, Էջմիածնին՝ 90 հազար և այլն:

Այնուհետև: Բաժինը հատկապես ուշադիր է եղել տարբեր հարանվանությունների պատկանող հայկական վարժարանների և ուրիշ միավորումների հարցում: Նպաստներ են տրվել Անարատ Հղության հայ կաթոլիկ քույրերի վարժարանին (Բաղդադ), Բուենոս Այրեսի և Հալեպի Մխիթարյան վարժարաններին, Բոստոնի

²⁰ «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, № 1, էջ 108–119:

Սուրբ Գրիգոր Մխիթարյան վարժարանին, Ս. Անտուան Ավետարանական եկեղեցու մշակութային ընկերությանը (Ֆրանսիա), Զմմառի վանքին (Լիբանան), Հայ կաթոլիկ Սուրբ Ներսես վարժարանին (Բաղդադ), Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան վարժարանին, կաթոլիկ քույրերի վարժարաններին Ղամիշլիում և Պուրճ Համուդում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններին, Միրիայի հայ ավետարանական եկեղեցու միությանը, կաթոլիկ սուրբ Հակոբ հիվանդանոցին (Կ. Պոլիս) և այլն, և այլն: Անհամեմատ ավելի մեծ քանակությամբ կրթաթոշակներ են հատկացվել Սփյուռքի չունեցող աշակերտների համար: Շարունակվել է գործակցությունը միջազգային մարդասիրական ծրագրերի հետ՝ ծերանոցների կառուցման, նրանց խնամքի, գաղթականների տեղավորման ուղղությամբ:

1995–1998 թթ. վերաբերող նյութն ընդհանրացված հաշվետվություններ-վերլուծություններ են, որ կատարել է հենց Հայկական բաժինը²¹: Ցավոք, նյութի մեջ բացակայում են վիճակագրական մանրամասն տվյալները՝ գործունեության բոլոր ուղղություններում ըստ տարիների կատարված նպաստների վերաբերյալ: Այնուամենայնիվ, հրատարակված ցուցանիշներն էլ, միմյանց գումարելու պարագայում, թույլ են տալիս վստահ արձանագրելու, թե բաժնի գործունեությունը տարեց-տարի միայն ընդլայնվում է: Եվ մանավանդ ստանում է ավելի շեշտված նպատակալացություն: 1996, 1997 և 1998 թթ. յուրաքանչյուր տարում հատկացվել են ավելի քան 3.5 միլիոն դոլարի նպաստներ, թեպետ շատ դեպքերում բավականին ծավալուն և վստահաբար ծախսատար ձեռնարկումների պարագայում առկա է միան նկարագրությունը:

Հատկանշական է, որ Հայկական բաժինը վարում է հստակ քաղաքականություն, որի նպատակն է օժանդակել հայության արմատների ամրապնդմանը հատկապես Մերձավոր Արևելքում՝ ծայր առած հայաթափության դեմ պայքարելու ձգտումով, ինչպես նաև հնարավորինս կանխելու արտագաղթը Հայաստանից: Առաջին պարագայում նկատելի է ուժերի կենտրոնացումը՝ Միջին և մերձավորարևելյան շրջաններում՝ հայկական միջավայրի ամրապնդմանն ուղղված նպաստների անընդհատ աճի ճանապարհով: 1960-ական թվականների երկրորդ կեսերից սկսած որոշ հատկացումներ են արվել Իրանի հայկական կազմակերպություններին: Սա ինքնին դրվատելի երևույթ է, քանի որ բավական արագ տեմպերով է ընթանում Իրանի հայաթափությունը: Գործունեության հիմնական դաշտը, սակայն, եղել են Միրիան ու Լիբանանը: Սա նույնպես կարևոր կողմնորոշման արդյունք է, քանի որ հենց այդ տարածքներն են 1970-ական թվականների կեսերից ի վեր դարձել անապահով ու սկսվել է հայերի զանգվածային ելքը՝ մանավանդ Լիբանանից: Երկրորդ պարագայում միանգամայն հստակ է, որ շեշտը դրվել է Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով ինչ-որ չափով սատարել երկրից արտագաղթի դեմ մղվող պայքարին: Հետաքրքրական է, որ իր տրամադրած տեղեկագրում Հայկական բաժինը շեշտում է այդ նպատակը. «Չնայած սոցիալ-տնտեսական դժվարությունները նոր արտագաղթի են մղում Հայաստանի գիտ-

²¹ Նույն տեղում, № 2, էջ 163–170:

նականներին, այնուամենայնիվ, մենք, մեր աջակցությամբ փորձում ենք նպաստել, որպեսզի Գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականները մնան երկրում և նպաստեն Հայաստանի գիտության զարգացմանը: Այդ նպատակն իրականացնելու համար օժանդակել ենք...»²²: Այնուհետև թվարկվում են վեց կետերից բաղկացած զանազան միջոցառումներ: Կամ՝ մի ուրիշ առիթով ասված է. «Հիմնարկությունը որոշել է արտասահմանում սովորող հայաստանցի ուսանողներին տրամադրել հատուկ կրթաթոշակ, որը կքաջալերի նրանց վերադարձը Հայրենիք»²³:

Այս ամենը Հայկական բաժնի ղեկավարության (Զավեն Եկավյան) արդարացի դիրքորոշման վկայությունն է: Դիրքորոշում, որի իմաստն է՝ ոչ թե լինել առհասարակ նպաստները մեխանիկորեն բաշխող մարմին, այլ դրանց միջոցով տանել ազգաշեն սոցիալ-հասարակական քաղաքականություն, որն առնչություն չունի կուսակցությունների, հասարակական կամ հարանվանական միավորումների հաճախ միայն անձնանպաստ քաղաքականության հետ:

Գործունեության նպատակառոտ դրսևորությունը նկատելի է վերջին առնվազն քառորդ դարի իրողությունների մեջ: Օրինակի համար վերցնենք կրթական ծրագրերը: Հայկական բաժինը հովանավորում է Սփյուռքի ավելի քան 170 դպրոցի: Ակնհայտ է, խոսքը բոլոր կարգի ու ենթակայության կրթական օջախների մասին է: Սփյուռքի ոչ մի բարեսիրական, ոչ մի համասփյուռքյան կազմակերպություն չունի նման մոտեցում: Հրատարակում է հայագիտական մեծ թվով աշխատություններ, նյութապես սատարում է հայագիտական պարբերականներին, այդ թվում Վենետիկի «Բազմավեպին», Վիեննայի «Հանդես ամսօրյային», Փարիզի «Հայկական հետազոտությունների հանդեսին» (ֆրանսերենով), Լեյդենի «Հայկական հետազոտությունների միջազգային ընկերակցության» «Newsletter»-ին, Երևանի «Պատմա-բանասիրական հանդեսին»: Շոշափելի միջոցներ է տրամադրում հայագիտական միջազգային կոնֆերանսների կազմակերպմանը: Այլ կերպ ասած՝ ըստ ամենայնի սատարում է հայագիտության զարգացմանը:

* * *

Մի մորուքավոր լեզենդ է շրջում: Թե իբր Գ. Կյուլպենկյանն առաջարկել էր Էջմիածնից Երևան տրամվայի գիծ քաշել, գույգ կողմերից շինություններով կառուցապատված, բայց խորհրդային իշխանավորները մերժել էին՝ ասելով. «Մենք կապիտալիստներից նվեր չենք ընդունում»: Լեզենդի վավերականությանը մեծապես նպաստեց Խանջյանի ձախավեր ճառը: Լեզենդը համատարեն տարածվում է հատկապես խորհրդային կարգի վերացումից հետո՝ «Եզր որ ընկնի, դանակավորները կշատանան» ժողովրդական առածի տրամաբանությամբ:

Լեզենդը դարձավ կլիշե, քաղաքական բամբասանք: Նույնիսկ գտնվեցին նախկին պետական պաշտոնյաներ, որ «հաստատ գիտեին» եղելությունը: Մեկն էլ, նախկին սովետական դիվանագետ, պնդում էր, թե 1960-ականներին իրեն էր դի-

²² Նույն տեղում, էջ 167:

²³ Նույն տեղում, էջ 166:

մել տիկին Կյուլպենկյանը, քանի որ Հայաստանի իշխանավորները հրաժարվել էին ընդունել ամուսնու նվիրած գեղարվեստական կտավը: Դիվանագետը երևի չգիտեր, որ հարգարժան տիկինը վաղուց հանգչում էր Նիցցայի գերեզմանատանը: Քաղաքական բամբասանքի սիրահարները հետին թվով հերոսանում էին՝ իրենց «արգահատանքը» ճշտելով խորհրդային կարգի նկատմամբ: Ոչ մեկը գեթ չէր ուզեցել մտաբերել, թե ինչպես Ա. Մյասնիկյանը Հովհ. Թումանյանին ուղարկեց արտասահման՝ Հայաստանի սովահար բնակչությանը «կապիտալիստների օգնությունը» հասցնելու համար: Կամ թե ինչ միջոցներով կառուցվեցին Նուբարաշենը, Երևանի ակնաբուժարանը և այլն:

Ո՞րն է, այնուամենայնիվ, վերոհիշյալ լեգենդի հետ կապված իրականությունը: Առաջին. Գալուստ Կյուլպենկյանը որևէ առնչություն չունի այդ հորինվածքի հետ: Երբ Երևանում էին գտնվում Ռ. Կյուլպենկյանը և Ջ. Եկավյանը, նրանց պատմեցինք այդ մասին: Մարդիկ պարզապես զարմացան: Երկրորդ. չարաբաստիկ «տրամվայի գծի» խնդիրը: Անհրաժեշտ է սպառիչ լուսաբանել հարցը, մեկընդմիջտ պատասխանած լինելու համար հանելուկին:

«Տրամվայի գծի» գաղափարը պատկանում էր Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանին: 1934 թ. երկրորդ կեսին կաթողիկոսը երկարատև առաքելությանը արտասահման է ուղարկում Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին: Վերջինս մեծ հեղինակություն ուներ իբրև նշանավոր գիտնական, հայկական մանրանկարչության պատմության քաջ գիտակ և տեսաբան, բայց հատկապես իբրև 1918 թ. Մարդարապատի ճակատամարտի հերոս, որը տարել էր մերօրյա Ղևոնդ երեցի դերը այդ ճակատագրական գուպարում: Հովսեփյանի խնդիրն էր մի շարք գաղթօջախներում կարգի բերել ներեկեղեցական գործերը, հատկապես շտկել 1933-ի տարեվերջին Ամերիկայում թեմակալ առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի եղերական սպանությունից հետո ստեղծված անհանդուրժելի կացությունը: Գարեգին արքեպիսկոպոսը այլևայլ խնդիրների շարքում նաև ստացավ կաթողիկոսի հետևյալ 08.08.1934 թ. հրահանգը. «Պատուիրեմք ծանոթանալ հանգամանաց կտակաց, որք սահմանեալք են յօգուտ հասարակաց գործին յայլ և այլ նպատակս, յանուն Մեր յորդորել ի կատարումն այսպիսեաց, որի ցարդ մնան անկատար կամ գործադրել զնոսա կրթական և նիւթական շինութեանց Հայաստան երկրիս»²⁴:

Խոսքը կոնկրետ մի փաստաթղթի մասին էր, որն առնչվում էր Անգլիայում բնակվող Ներսես Կյուլպենկյանի, Փարիզում՝ Մարի Կյուլպենկյանի և ԱՄՆ-ում՝ Հարություն Կյուլպենկյանի հետ: Դա կտակ էր, որի կտակարարներն էին հիշյալ անձնավորությունները: Նրանցից և ոչ մեկը որևիցե առնչություն չունեին Գալուստ Կյուլպենկյանի հետ: Կաթողիկոսը ցանկանում էր կտակի գործադրությունն ուղղել Հայաստանի վրա և համապատասխան հրահանգներ էր տվել: Հավանաբար, նախապես խորհրդակցել էր կառավարության հետ: Էջմիածնից Երևան «Էլեկտ-

²⁴ Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկեանի, Անթիլիաս, 2002, էջ 96:

րաքարը» կառուցելու գաղափարը պատկանում է Խորեն կաթողիկոսին: Գարեգին Հովսեփյանի խնդիրն էր միջոցներ հայթայթել ծրագրի իրականացման համար: Այդ առթիվ նրանց միջև բավական աշխույժ թղթակցություն է եղել: Ընդ որում, շոշափվել է նաև Գալուստ Գյուլպենկյանի անունը: Ահա թե ինչ էր գրում կաթողիկոսը 1936 թ. ապրիլի 18-ին. «Մենք լիահույս էինք, թե Մեր Ազգային բարերար Տիար Գալուստ Գյուլբենկյանը միայն ինքը կապահովեր մեր ցանկացած գումարը երկաթուղու կառուցման համար, սակայն ցայսօր նրանից որևէ պատասխան չենք լսում»²⁵: Իր հերթին Գարեգին արքեպիսկոպոսը հաղորդում էր (հավանաբար, 1936 թ. հունիսին). «Փարիզի Գ. Գյուլպենկյանի մասին գրել եմ, շատ զգոյշ պիտի լինել նորա հետ նման խնդիրների մասին խոսելիս. դեռ տեսնենք Էջմ-ի համար էլ մի բան պիտի անի՞, թե ոչ, որի համար ընդհանուր խոստում է տվել «Մի բան կանենք, մեր պարտքը կը կատարենք» խոսքերով»²⁶ (խոսքը Էջմիածնի նորոգության մասին էր – Կ. Դ.):

Ինչպես երևում է, նշված կտակից ոչինչ չի ստացվել, և Գարեգին արքեպիսկոպոսը դիմել է ուրիշ միջոցների: Հրապարակ են եկել ամերիկյան ռամկավարները, որոնք նույնիսկ համագումարի օրակարգ են դարձրել հարցը: Ջուզահեռաբար, արքեպիսկոպոսը հանգանակություն է կազմակերպել:

Հերթական նամակներից մեկում Գարեգին արքեպիսկոպոսը հայտնում է, որ Ամերիկայում էլեկտրաքարշն այլևս հնացած է, որ քանդում են դրանց գծերը, ուրեմն կարելի է շատ էժան գնով ձեռք բերել ռելսերը, եթե հաջողվի արագ կերպով դրամ հավաքել²⁷: Ի դեպ, Սփյուռքի միջոցներով ռելսերի ձեռքբերման պատմությունը Սահակ Տեր-Գաբրիելյանի միջոցով հասնում է Ստալինին, երբ կառավարությունը դիմում է Կենտրոնին, թույլտվություն ստանալու համար: Քաղաքական բամբասանքների սիրահարների համար օգտակար կլիներ իմանալ՝ արդյոք մերժե՞լ, թե ընդունե՞լ էր Ստալինը «կապիտալիստների նվերը»: Արտո Եղիազարյանի (որը տարիներ շարունակ անցել էր սիբիրյան ճամբարներով) մատուցումով, Ստալինն ասել էր. «Եթե հայ կապիտալիստները հիմարություն են թույլ տալիս օգնելով հայ կոմունիստներին կառուցել սոցիալիզմ, ապա Հայաստանի կոմունիստները թույլ կտան ավելի մեծ հիմարություն, եթե հրաժարվեն այդ օգնությունից»²⁸:

Կարճ ժամանակ անց Գարեգին արքեպիսկոպոսը հրաժարվում է էլեկտրաքարշի գաղափարից և սկսում է միջոցներ ժողովել ավտոբուսների համար: «...Աշխատանք եմ սկսել Էջմիածնից Երևան և ընդհակառակն երթնեկող ավտոբուսների ձեռքբերելուն, – գրում էր նա 1937 հունվարի 25-ին:– Իմ նպատակն է չորս ավտոբուս ձեռք բերել, մեկը Դեթրոյթի գաղութի կողմից, մեկը Չիկագոյի, երրորդը Բոստոնի և շրջակայքի և չորրորդը Նյու Յորքի... Էլեկտրաքարշի սիստեմը արդեն հնացած է համարվում և ոչ գործնական: Եթե Էջմիածին–Երևան խճուղին նորոգ-

²⁵ Նույն տեղում, էջ 170:

²⁶ Նույն տեղում, էջ 198:

²⁷ Նույն տեղում, էջ 175:

²⁸ Տե՛ս Է. դ. Մ է լ ք ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 282:

վի այդ նպատակով, առանց փոշու և ավելի դյուրին և արագ երթնեկություն կարելի է հաստատել, նույնիսկ ավտոբուսները կարելի է էլեկտրաթելերով շարժել, բայց առանց ռելսերի»²⁹:

Ի վերջո, բոլոր ջանքերն ավարտվում են ապարդյուն: Շատ պարզ պատճառով: Միջոցները չեն բավարարում: Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանն էլ ավարտում էր իր առաքելությունը և մեկնում Անթիլիաս, քանի որ ընտրվել էր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս:

Թեպետ Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը, բնականաբար, նաև նրա մի մասնիկը՝ «Հայկական համայնքների ծառայության բաժանմունքը» քաղաքական նպատակներ չեն հետապնդում, սակայն վերջինս առարկայականորեն իրականացնում է հայ ժողովրդի համար կենսականորեն անհրաժեշտ քաղաքական գործ: Բաժինն իր շոշափելի լուրման է ներդնում ազգային միասնության գործի հաջողության մեջ:

²⁹ Թղթակցութիւն..., էջ 225: